ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2018 թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-յուդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կամարիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2018 թվականի մարտի 26-ի N 161 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի հունվարի 16-ի *««ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին»* N 2 որոշման 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Կամարիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնադրության տիտղոսաթերթում և կանոնադրության ընդհանուր դրույթներ բաժնում *«Կամարիսի միջնակարգ դպրոց»* բառերը փոխարինել *«Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց»* բառերով:

2. Հաստատել *«Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց»* պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

3. Հանձնարարել դպրոցի տնօրենին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կանոնադրության մեջ կատարած փոփոխությունը գրանցելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2018 թվականի մարտի 27
ք. Հրազդան